ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Մ. ՄԱՆՐԻԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մանրիկյան.

Ի պատասխան Ձեր 11.08.2020թ. հ.096 գրության՝ տեղեկացվում է.

2018 թվականից սկսած Երևանի քաղաքապետարանը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգրեր չի տրամադրում: Երևան համայնքի բնակիչների համար բուժծառայությունների մատուցման մատչելիության ապահովման նպատակով Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին «Բնակչությանը կոմպյուտերային և մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիային ծառայության տրամադրում» ծրագրի շրջանակներում ՀՀ գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք է բերվում կոմպյուտերային և մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայություն: 2018, 2019 և 2020 թվականներին կազմակերպված գնման գործընթացների արդյունքում հաղթող է ճանաչվել «ՄԻԲՍ» ԲԿ-ն: 2018 թվականից առ այսօր Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրվել է թվով 339 կոմպյուտերային տոմոգրաֆիայի և թվով 233 մագնիսառեզոնանսային ծառայության ուղեգիր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ